ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

գործուղման արդյունքների մասին

1. ԱՆՈՒՆ, ԱԶԳԱՆՈՒՆ

Գայանե Ներսիսյան

2. ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆ

ՀՀ ԳԱԱ Միջազգային գիտակրթական կենտրոնի Բնապահպանության և բնօգտագործման ամբիոնի «Քաղաքային շրջակա միջավայր» առարկայի դասախոս

3. ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՎԱՅՐԸ/ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

Լեհաստանի Կրակով քաղաքի Կրակովի մանկավարժական համալսարան, 2022թվականի մայիսի 6-12-ը

4. ՀՐԱՎԻՐՈՂ ԿՈՂՄԸ

Կրակովի մանկավարժական համալսարան

5. ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ

«Քաղաքային կանաչապատում» թեմայով դասախոսությունների ներկայացում և քննարկում ներկայիս գլոբալ կլիմայական փոփոխությունների կոնտեքստում:

6. ՔՆՆԱՐԿՎԱԾ ԹԵՄԱՆԵՐԸ

1. «Քաղաքային կանաչապատում»
2. «Ուղղաձիգ կանաչապատում»
3. «Կանաչ ենթակառուցվածքների էկոհամակարգային ծառայություններ»
4. «Երևան քաղաքի բնապահպանական խնդիրները»

7. ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԸ, ԵԼՈՒՅԹՆԵՐԸ, ԲԱՐՁՐԱՑՎԱԾ ԿԱՄ ՔՆՆԱՐԿՎԱԾ ՀԱՐՑԵՐԸ

1. Եվրամիության էրազմուս պլյուս մոբիլիթի ծրագրի շրջանակներում ճանաչողական հանդիպում տեղի ունեցավ Կրակովի մանկավարժական համալսարանի այս ծրագրի գիտական համակարգող, դասախոս և նաև #Էկոկենտրոնի և #ՀՀ ԳԱԱ Միջազգային գիտակրթական կենտրոնի «Բնապահպանության և բնօգտագործում» ամբիոնի մեր լավ գործընկեր Ջոհաննայի հետ: Այս ծրագիրը մեկնարկել է դեռևս 2018 թվականից, որի գիտական համակարգողը հանդիսանում եմ ես՝ ՀՀ ԳԱԱ Միջազգային գիտակրթական կենտրոնի #Բնապահպանության և բնօգտագործման ամբիոնի «Քաղաքային միջավայրի էկոլոգիա» առարկայի դասախոս:

Հանդիպման ժամանակ մեր գործընկերոջ հետ ծավալեցինք այս տարվա Համալսարանում նախատեսվող #Քաղաքային կանաչապատում, Ծառերի էկոհամակարգային ծառայություններ՝՝ թեմաների շուրջ քննարկումներ հենց Կրակովի Կենտրոնական #Jordana park'' այգում:

#CENS #Էկոկենտրոն #CENSTEAM

2. Ծրագրի շրջանակներում այցելություն կազմակերպվեց նաև Կրակովի մանկավարժական համալսարանի Աշխարհագրության ինստիտուտի ձեռներեցության և տարածական կառավարման ամբիոն /Department of Entrepreneurship and Spatial Management/, քննարկվեցին ծրագրի շրջանակներում համագործակցությունը շարունակելու հեռանկարներն ու հնարավորությունները աշխարհի փոփոխությունների նոր ենթատեքստում, հատկապես կանաչապատման նոր մոտեցումների մասին, որին շատ արագ ինտեգրվել է Կրակով քաղաքը նոր կանաչապատման լուծումներով՝ նպաստելով կլիմայի փոփոխության ազդեցության մեղմմանն ու հարմարվողականությանը, ինչպես նաև կենսաբազմազանության ապահովմանը: Այս համատեքստում շատ արդիական էին քաղաքային տարածքների լանդշաֆտային դիզայնի մոտեցումները, որոնք ներկայացվեցին «Լանդշաֆտային դիզայն» բաժնի ուսանողների բարեկարգման և կանաչապատման նախագծերի շրջանակներում:
3. Հանդիպումներ կազմակերպվեցին նաև Աշխարհագրության ինստիտուտի աշխարհագրության կրթության և հետազոտությունների ամբիոնի, Կրակովի մանկավարժական համալսարանի արտաքին կապերի բաժնի ներկայացուցիչների հետ՝ վերջինիս հետ սերտորեն համագործակցելով արդեն 5 տարի:
4. Այցելություն Կրակով քաղաք չսահմանափակվեց միայն հանդիպումներով և քննարկումներով Համալսարանի անձնակազմի հետ: Մայիսի 10-ին ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ բնապահպանության և բնօգտագործման ամբիոնի դասախոս Գայանե Ներսիսյանը մասնակցեց նաև Հայնայի և Արիզոնայի պետական համալսարանների կողմից համատեղ բացված միջազգային զբոսաշրջության քոլեջի դոկտոր Յանա Վենգելի առցանց հանդիպմանը, որը նվիրված էր նոր համավարակային պայմաններում մարդկանց զբոսաշրջային ուղևորություններին ներգրավվածության բարձրացմանը՝ միաժամանակ ներառելով բնապահպանական կրթության բաղադրիչը, հատկապես բնության հատուկ պահպանվող վայրերում՝ ծանոթացնելով սովորողներին և զբոսաշրջիկներին սպիտակ և կարմիր գրքի տեսակների հետ, ինչպես նաև կենսաբազմազանության ավելացմանն ուղղված միջոցառումներին:

https://www.facebook.com/gayane.nersisyan.14/

8. ՀԱՆԴԻՊՄԱՆ ՀԱՎԱՔԻ ԺԱՄԱՆԱԿ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ, ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՍՏՈՐԱԳՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

Ծրագրի շրջանակներում նախատեսվում է շարունակել արդեն մեկնարկած համագործակցությունը «Լանդշաֆտային դիզայն» բաժնի հետ: Հընթացս քննարկվում է Կրակովի մանկավարժական համալսարանի կենսաբանական ֆակուլտետի հետ համագործակցությունը, որը նոր հնարավորություններ կստեղծի կազմակերպելու տարբեր հետազոտական աշխատանքներ և տպագրելու համատեղ հոդվածներ:

9. ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ, ԱՄՍԱԹԻՎԸ

Նախորդ համագործակցության պայմանագիրը դեռ ուժի մեջ է, որը հնարավորություն կընձեռի նոր ծրագրի դիմել:

Գայանե Ներսիսյան

30.05.2022թ.